<<ԼՄՀՆԴ>> ՊՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ԵՎ ՄՐԳԵՐԻ ԳՆՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԼՄՀՆԴ-ՄԱԱՊՁԲ-21/20

ք. Վանաձոր «01» հունիսի 2021թ.

«ԼՄՀՆԴ» ՊՓԲԸ-ը ի դեմս Ա.Ա.Ղուլիջանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և ԱՁ Ռաֆիկ Անդրեասյանը, որը գործում ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար հրեն

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 539 700 /հինգ հարյուր երեսունինը հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը

կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի

---

[20] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ*

մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[22]

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[23]

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ

[22] Հարկ է նշել, որ գործակալի փոփոխման դեպքում

համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՄԱՏԱԿԱՐԱՐ
<<ԼՄՀՆԴ>> ՊՓԲԸ	ԱՁ Ռաֆիկ Անդրեասյան
ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	ք.Վանաձոր, Ավետիսյան 17
<<ԱՄԵՐԻԱԲԱՆԿ>> ՓԲԸ, Վանաձոր մ/ճ	<<ԱՄԵՐԻԱԲԱՆԿ>> ՓԲԸ, Վանաձոր մ/ճ
Հ/Հ 1570015001210100	Հ/Հ 1570058067550100
ՀՎՀՀ 06902087	ՀՎՀՀ 66866357
Տնօրեն՝ Ա.Ա.Ղուլիջանյան	ԱՁ Ռաֆիկ Անդրեասյան
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3
«01» հունիսի 2021թ. կնքված
<<ԼՄՀՆԴ-ՄԱԱՊՁԲ-21/20>ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1

«01» հունիսի 2021թ. կնքված

<<ԼՄՀՆԴ-ՄԱԱՊՁԲ-21/20>> ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____

Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը

(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____

պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց **Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____ _____

ազգանուն, անուն ազգանուն, անուն

_____ _____

Ստորագրություն ստորագրություն

Հավելված N 1
«01 » հունիսի 2021թ. կնքված
«ԼՄՀՆԴ-ՄԱԱՊՁԲ-21/20» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ապրանքի									
հերթական վերոնախատեսվա	անվանումը և ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
							հասցեն	ենթակա	ժամկետը
1	Կարտոֆիլ /01.06.-31.10.2021թ./	Միջին չափսի, միջահաս, I տեսակի, չցրտահարված, առանց վնասվածքների, կլոր ձվաձև 4-5 սմ: Տեսականու մաքրությունը՝ 90 %-ից ոչ պակաս, փաթեթավորումը՝ առանց չափածրարման: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	170	170000	1000	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	1000	06-11.2021թ.
2	Սոխ /01.06.-31.10.2021թ./	Թարմ, կիսակծու, ընտիր տեսակի, նեղ մասի տրամագիծը 3 սմ-ից ոչ պակաս, ԳՕՍՏ 27166-86, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված 'Թարմ պտուղբանջարեղենի տեխնիկական կանոնակարգի' և 'Սննդամթերքի անվտանգության մասին' ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	220	22000	100	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	100	06-11.2021թ.
3	Կաղամբ /01.06.-31.10.2021թ./	Վաղահաս, արտաքին տեսքը՝ գլուխները թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չծլած, մաքուր, մեկ բուսաբանական տեսակի, առանց վնասվածքների: Գլուխները պետք է լինեն լիովին կազմավորված, ամուր, ոչ փխրուն և չլխկած: Կաղամբակոթի երկարությունը 3սմ-ից ոչ ավելի: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	200	60000	300	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	300	06-11.2021թ.

4	Գազար /01.06.-31.10.2021թ./	Սովարական և ընտիր տեսակի, վաղահաս: ԳOUS 26767-85: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	270	27000	100	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	100	06-11.2021թ.
5	Բազուկ /ճակնդեղ/ /01.06.-31.10.2021թ./	Արտաքին տեսքը՝ արմատապտուղները թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չոր, չկեղտոտված, առանց ճաքերի և վնասվածքների: Ներքին կառուցվածքը՝ միջուկը հյութալի, մուգ կարմիր՝ տարբեր երանգների: Արմատապտուղների չափերը (ամենամեծ լայնակի տրամագծով) 5-14սմ: Թույլատրվում է շեղումներ նշված չափերից և մեխանիկական վնասվածքներով 3 մմ ավել խորությամբ՝ ընդհանուր քանակի 5%-ից ոչ ավելի: Արմատապտուղներին կպած հողի քանակությունը ոչ ավել քան ընդհանուր քանակի 1%:	կգ	200	20000	100	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	100	06-11.2021թ.
6	Ծիրան	Ծիրան թարմ, պտղաբանական I խմբի, տեղական, նեղ տրամագիծը 5 սմ-ից ոչ պակաս, ԳOUS 21122-75, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և«Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	400	16000	40	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	40	06-11.2021թ.
7	Մաղադանոս թարմ	Կապը՝ 130-150 գրամ, թարմ: Վերածված է կգ-ի: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	կգ	1000	9000	9	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	9	06-11.2021թ.
8	Համեմ թարմ	Կապը՝ 130-150 գրամ, թարմ: **Վերածված է կգ-ի:**Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:	կգ	1000	9000	9	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	9	06-11.2021թ.
9	Սամիթ թարմ	Կապը՝ 130-150 գրամ, թարմ:**Վերածված է կգ-ի:** Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:	կգ	1000	4000	4	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	4	06-11.2021թ.

10	Սխտոր	Սովորական տեսակի, ԳՕՍ 27569-87, անվտանգությունը, փաթեթավորու–մը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	կգ	1200	3600	3	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	3	06-11.2021թ.
11	Սմբուկ /01.06.-31.10.2021թ./	Սմբուկ թարմ,արտաքին տեսքը՝ամբողջական, առանց հիվանդությունների և վնասվածքների, ԳՕՍ 13907-86: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:	կգ	130	19500	150	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	150	06-11.2021թ.
12	Կանաչ պղպեղ /01.06.-31.10.2021թ./	Կանաչ պղպեղ թարմ օգտագործման տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	370	55500	150	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	150	06-11.2021թ.
13	Լոլիկ /01.06.-31.10.2021թ./	Լոլիկ թարմ օգտագործման տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	170	34000	200	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	200	06-11.2021թ.
14	Վարունգ /01.06.-31.10.2021թ./	Վարունգ թարմ, արտաքին տեսքը՝ամբողջական, առանց հիվանդությունների և վնասվածքների, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	170	34000	200	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	200	06-11.2021թ.
15	Դեղձ	Դեղձ թարմ, պտղաբանական I խմբի, տեղական տարբեր տեսակների, նեղ տրամագիծը 5 սմ-ից ոչ պակաս, ԳՕՍ 21122-75, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	350	14000	40	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	40	06-11.2021թ.
16	Ծաղկակաղամբ	Թարմ, սպիտակ, առանց արտաքին վնասվածքների, տեղական արտադրության: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	կգ	350	10500	30	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	30	06-11.2021թ.
17	Կանաչ լոբի /01.06-31.10. 2021թ./	Ընտիր կամ սովորական տեսակի: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	կգ	370	18500	50	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57	50	06-11.2021թ.

18	Դդմիկ /01.06.թ.-31.09.2021թ./	Դդմիկ թարմ, արտաքին տեսքը՝ամբողջական, առանց հիվանդությունների և վնասվածքների, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	100	5000	50	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 58	50	06-11.2021թ.
19	Կարմիր պղպեղ	Սովորական տեսակի, ԳOUS 27569-87, անվտանգությունը, փաթեթա–վորու–մը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկ–տեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	կգ	270	8100	30	ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 59	30	06-11.2021թ.
		Ընդամենը՝			**539700**				

Ընդամենը՝ հինգ հարյուր երեսունինը հազար յոթ հարյուր դրամ:

1. Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը: Ընդ որում հաջորդող պատվերների մատակարարումներն իրականացվում են պատվերի ներկայացմանը հաջորդող 2 օրվա ընթացքում: Պայմանագիրը գործելու է մինչև 2021թ. դեկտեմբերի 30-ը: Մատակարարման վայրը՝ ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57:

2. Յուրաքանչյուր ապրանքատեսակի նշված ծավալը առավելագույնն է, այն կարող է նվազեցվել Գնորդի կողմից, հաշվի առնելով տարվա ընթացքում հիվանդների փաստացի թվաքանակը

3.Ապրանքի վրա պարտադիր պետք է առկա լինի ֆիմայի նշանը:

4. Մատակարարումը կատարվում է մատակարարի միջոցների հաշվին՝ Գնման ժամանակացույցում նշված հասցեով:

5. Ընդունել ի գիտություն, որ պայմանագիր կնքելուց հետո մատակարարը, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի համաձայն, պետք է գրանցված լինի սննդի շղթայում ընդգրկված սննդի շղթայի օպերատորների ցանկում՝ ըստ անհրաժեշտության:

6. Նախատեսվում է գնել 2021 թվականի ընթացքում՝ ընդ որում մինչև դեկտեմբեր ամսվա համար սահմանված վերջին աշխատանքային օրը ներառյալ:

7.Պիտանելիության ժամկետները՝ ընդհանուր պիտանելիության ժամկետի առնվազն 90%-ը:

8.Մատակարարումը իրականացվում է ըստ պատվիրատուի կողմից ներկայացվող քանակների և մատակարարման ժամկետների, նկատի ունենալով, որ մատակարարման առաջին պատվերի տրամադրման և մատակարարման միջև ընկած ժամանակահատվածը չի կարող պակաս լինել 30 աշխատանքային օրից, եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարումն իրականացնել ավելի կարճ ժամկետում: Ընդ որում հաջորդող պատվերների մատակարարումներն իրականացվում են պատվերի ներկայացմանը հաջորդող 2 օրվա ընթացքում: Պայմանագիրը գործելու է մինչև 2021թ. դեկտեմբերի 30-ը: Մատակարարման վայրը՝ ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 57:

9.Վճարումները կատարվելու են Պայմանագրի գործողության շրջանակներում, յուրաքանչյուր ամսվա մինչև 20-րդ բանկային օրը, նախորդ ամսվա ընթացքում փաստացի մատակարարված ապրանքների 100%-ի չափով՝ Մատակարարի կողմից հաստատված և ներկայացված հաշիվ-ապրանքագրի և հանձման-ընդունման արձանագրության հիման վրա:

ԳՆՈՐԴ	ՄԱՏԱԿԱՐԱՐ
<<ԼՄՀՆԴ>> ՊՓԲԸ	ԱՁ Ռաֆիկ Անդրեասյան
ք. Վանաձոր, Գ.Նժդեհի 57	ք. Վանաձոր, Ավետիսյան 17
<<ԱՄԵՐԻԱԲԱՆԿ>> ՓԲԸ, Վանաձոր մ/ճ	<<ԱՄԵՐԻԱԲԱՆԿ>> ՓԲԸ, Վանաձոր մ/ճ
Հ/Հ 1570015001210100	Հ/Հ 1570058067550100
ՀՎՀՀ 06902087	ՀՎՀՀ 66866357
Տնօրեն՝ Ա.Ա.Դուլիջանյան	ԱՁ Ռաֆիկ Անդրեասյան
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2
01 հունիսի 2021թ. կնքված
<<ԼՄՀՆԴ-ՄԱԱՊՁԲ-21/20>> ծածկագրով պայմանագրի

Վճարման ժամանակացույց

	Պատվիրատուի և գնման ենթակա ապրանքների անվանումը	Չափի միավ	Առավելագույն քանակը	Միավ. գինը							Ընդամենը
					Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Գումարը
1	Կարտոֆիլ /01.06.-31.10.2021թ./	կգ	1000	170	28220	56440	84660	112880	141100	170000	170000
2	Սոխ /01.06.-31.10.2021թ./	կգ	100	220	3740	7480	11220	14960	18700	22000	22000
3	Կաղամբ /01.06.-31.10.2021թ./	կգ	300	200	10000	20000	30000	40000	50000	60000	60000
4	Գազար /01.06.-31.10.2021թ./	կգ	100	270	4320	8640	12960	17280	21600	27000	27000
5	Բազուկ /ճակնդեղ/ /01.06.-31.10.2021թ./	կգ	100	200	3200	6400	9600	12800	16000	20000	20000
6	Ծիրան	կգ	40	400		8000	16000	16000	16000	16000	16000
7	Մաղադանոս թարմ	կգ	9	1000	1500	3000	4500	6000	7500	9000	9000
8	Համեմ թարմ	կգ	9	1000	1500	3000	4500	6000	7500	9000	9000
9	Սամիթ թարմ	կգ	4	1000	700	1400	2100	2800	3500	4000	4000
10	Սխտոր	կգ	3	1200		1200	2400	2400	3600	3600	3600
11	Սմբուկ /01.06.-31.10.2021թ./	կգ	150	130			6500	13000	19500	19500	19500
12	Կանաչ պղպեղ /01.06.-31.10.2021թ./	կգ	150	370	9250	18500	27750	37000	46250	55500	55500
13	Լոլիկ /01.06.-31.10.2021թ./	կգ	200	170	6600	13200	19800	26400	34000	34000	34000
14	Վարունգ /01.06.-31.10.2021թ./	կգ	200	170	6600	13200	19800	26400	34000	34000	34000

15	Դեղձ	կգ	40	350		7000	14000	14000	14000	14000	14000
16	Ծաղկակաղամբ	կգ	30	350		3500	7000	7000	10500	10500	10500
17	Կանաչ լոբի /01.06-31.10. 2021թ./	կգ	50	370	5550	11100	16650	18500	18500	18500	18500
18	Դդմիկ /01.06.թ.-31.09.2021թ./	կգ	50	100	1500	3000	5000	5000	5000	5000	5000
19	Կարմիր պղպեղ	կգ	30	270			2700,0	5400,0	8100	8100	8100
	ԸՆԴԱՄԵՆԸ				82680	185060	297140	383820	475350	539700	**539 700**

Ընդամենը՝ Հինգ հարյուր երեսունինը հազար յոթ հարյուր դրամ:

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ.Մատակարարումը իրականացվում է ըստ պատվիրատուի կողմից ներկայացվող քանակների և մատակարարման ժամկետների, նկատի ունենալով, որ մատակարարման առաջին պատվերի տրամադրման և մատակարարման միջև ընկած ժամանակահատվածը չի կարող պակաս լինել 30 աշխատանքային օրից, եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարումն իրականացնել ավելի կարճ ժամկետում: Ընդ որում հաջորդող պատվերների մատակարարումներն իրականացվում են պատվերի ներկայացմանը հաջորդող 5 օրվա ընթացքում: Պայմանագիրը գործում է մինչև 2021թ. դեկտեմբերի 25-ը:

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՎԱՅՐԸ. ք.Վանաձոր Գ.Նժդեհի 57

Մատակարարը իր ուժերով և միջոցներով պետք է ապահովի ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը:

ԳՆՈՐԴ

<<ԼՄՀՆԴ>> ՊՓԲԸ

ք. Վանաձոր, Գ.Նժդեհի 57

<<ԱՄԵՐԻԱԲԱՆԿ>> ՓԲԸ, Վանաձոր մ/ճ

Հ/Հ 1570015001210100

ՀՎՀՀ 06902087

Տնօրեն Ա.Ա.Ռուբինյան

Կ.Տ.

ՄԱՏԱԿԱՐԱՐ

ԱՁ Ռաֆիկ Անդրեասյան

ք.Վանաձոր, Ավետիսյան17

<<ԱՄԵՐԻԱԲԱՆԿ>> ՓԲԸ, Վանաձոր մ/ճ

Հ/Հ 1570058067550100

ՀՎՀՀ 66866357

ԱՁ Ռաֆիկ Անդրեասյան

Կ.Տ